ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

Լուսանցք

10

(181)
Հոկտեմբեր, 2021

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԱՉՈՒՂԻՆԵՐՈՒՄ

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2021թ. հոկտեմբերի 22-23-ին Գյումրու պատմական կենտրոնին առանձին շուք տվող դասական շինություններում՝ Երիտասարդական պալատում ու Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնում, տեղի ունեցավ միջազգային գիտաժողով, որին կազմակերպչի՝ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հրավերով, գրեթե առանց բացակայությունների, մասնակցում էր հայագետների մի հոծ բանակ:

Գիտաժողովը նվիրված է պատմական Մեծ Հայքի հյուսիսային շրջանների՝ Տայք և Գուգարք աշխարհների, Համշենի, ինչպես նաև Այրարատ աշխարհի Վանանդ և Շիրակ գավառների պատմության և մշակույթի տարբեր կնճռոտ հարցերի լուսաբանմանը: Պատմական տարբեր ժամանակներում լինելով իրադարձությունների հորձանուտում, շատ հաճախ նաև դառնալով առանցքային գործոն հարևան պետությունների հետ փոխհարաբերություններում, Հայաստանի հյուսիսային հատվածը ենթարկվել է զանազան ազդեցությունների, կրել հարևան պետությունների ու նվաճողների հատուկ քաղաքականության ծանր հետևանքները: Ուծացման բյուզանդական, վրացական և թուրքական ալիքները կրած Հյուսիսային Հայաստանի հայության տարբեր շերտեր «կորան» պատմության էջերում, իսկ նրանց թողած հոգևոր-մշակութային ժառանգության իրավահաջորդը լինելուն հավակնում են Վրաստանն ու Թուրքիան:

Հրավիրված գիտաժողովը նպատակ էր հետապնդում հայտածել Հայաստանի հյուսիսի հնագիտական, պատմագիտական, ազգաբանական ու բանագիտական ուսումնասիրության ժամանակակից մակարդակը, բացահայտել տարաբնույթ հետազոտությունների իրականացման գործում առկա հիմնախնդիրները, առաջադրել ու քննարկել ուսումնասիրվող վիճահարույց իրողությունների նորովի գիտական մեկնաբանություններ և հնարավորության սահմաններում ուրվագծել հայագիտության ընդհանուր համատեքստում Հյուսիսային Հայաստանի հարուստ ազգագրության, բանահյուսության, պատմության, արհեստների ու արվեստների ուսումնասիրության հետագա ընթացքն ու առաջնահերթությունները 21-րդ դարի առաջին քառորդին:

Գիտաժողովն ուներ շուրջ 50 մասնակիցներ ՀՀ ակադեմիական համակարգի հայագիտական ինստիտուտներից և բուհերի հայագիտական ամբիոններից: Մասնակցության հայտ էին ներկայացրել նաև մեր գործընկերները Մեծ Բրիտանիայից և Հունաստանից: Առանձնակի հետաքրքրությամբ լսվեցին «Խաղտիք -Համշենը հայոց բնօրրանի և պետականության մաս», «Ռուս և եվրոպացի ճանապարհորդները Հյուսիսային Հայաստանում (մինչև 1820թ.)», «Կոմիտասի շիրակյան գրառումները», «Վենետիկի Մխիթարյանների հոգևոր ներկայությունն Ալեքսանդրապոլի հասարակական կյանքում», «Ալեքսանդրապոլի գեղարվեստական կյանքը XX դարի սկզբին», «Շիրակի գեղարվեստական գործվածքը 19-րդ դ. վերջին և 20-րդ դարի սկզբին», «Տեղական զրույցներ Գյումրի-Ալեքսանդրապոլի հայտնի գերդաստանների մասին», «Շիրակի մարզի բնակչության ազգային փոքրամասնությունների թվի շարժընթացը (XXդ. վերջ-XXIդ. սկիզբ)» և այլ գիտական զեկուցումներ:

Մեր և արտերկրի գիտաշխատողների այս և այլ բազմաթիվ զեկուցումներ լավագույն վկայությունն էին այն իրողության, որ Հայաստանի հյուսիսն այսօր էլ մեծաթիվ հայագետների հետաքրքրությունների շրջանակում է: Գիտաժողովի երաշխավորությամբ 33 զեկուցումներ տեղ կգտնեն Կենտրոնի «Գիտական աշխատություններ» պարբերականի 2021թ. 24-րդ հատորում:

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի
տնօրեն, պատմ. գիտ. թեկն.

«ԽՈՍՈՂԸ ՉԳԻՏԻ, ԻՄԱՑՈՂԸ ՉԻ ԽՈՍՈՒՄ»



Ծնվել է
2001թ. դեկտեմբերի 14-ին:
Զոհվել է հոկտեմբերի 10-ին:
Հետմահու պարգևատրվել է
“Մարտական ծառայություն
մեդալով”:

Վերջերս Գյումրու երիտասարդական պալատում տեղի ունեցավ Արցախյան պատերազմում անմահացած, 18-ամյա Շանթ Նավոյանի ԽՈՍՈՂԸ ՉԳԻՏԻ, ԻՄԱՑՈՂԸ ՉԻ ԽՈՍՈՒՄ իմաստուն խորագրով գրքի շնորհանդեսը:

ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ռեժիսոր Սիրանույշ Ղուկասյանը դրվագ առ դրվագ անդրադարձավ Շանթի կենսագրությանն ու գրքին՝ իմաստավորելով նրա կյանքի ու ստեղծագործական ճանապարհի յուրաքանչյուր էջը: Գրքի բեմականացված ընթերցումը Կինոյի ու թատրոնի պետական ինստիտուտի ուսանողների կողմից, ինչպես նաև Գյումրու Հայորդաց տան երգչախմբի հայրենասիրական թեմայով երգերի կատարումներն առանձնահատուկ տպավորություն թողեցին ներկաների վրա: Շանթի հարազատները, մարտական ընկերներն ու հրամանատարը իրենց խոսքերում բացահայտեցին Շանթ Նավոյան հայորդու էության ու նվիրումի ֆենոմենը: Հուշ-ցերեկույթը համակարգող Սոֆյա Հովսեփյանը վերստին հաստատեց, որ հայի ոգու ինքնության հաղթանակն անհնար է պատկերացնել առանց այնպիսի հայորդիների, ինչպիսին Շանթն է: ՇԱՆԹԸ՝ միշտ ներկա մեր բոլոր օրերի մեջ:

Բանաստեղծուհի Ռոզա Հովհաննիսյանը Շանթի գրքի հակիրճ անդրադարձում նշեց.

«Այս շնորհանդեսը Շանթի ոգու կայծերը ցրող, ծավալող, սրտից սիրտ հանդես է, նաև հիշատակաց տուրք, որ բնավ չի ազդելու գրքին տրված իմ գնահատականին. այստեղ ես տեսա գրողին ու մտավորականին հատուկ մտքի ձեռագիր՝ զարմանալիորեն տարիքով չպայմանավորված:

Ասում են՝ լավագույն վեպը պատերազմի մասին զինվորի օրագրերն են:

Շանթը կյանքի երևույթներին նայում է սրտագրությամբ. նա գիտի, որ կյանքը դիպված է, դիպված է նաև կյանքից այնկողմը՝ անեզրությունը, որին հասնում ես անգոյությանը ձեռնոց նետելով, հաղթանակ տանելով մահվան դեմ: Այսօր Շանթի հաղթանակի մի օրն է, ու ոգեկիր երթը պիտի շարունակվի, տարածվի խրամատներում ու խրամատներից դուրս, հայոց բոլոր շեներում ու քաղաքներում, պիտի շարունակվի խրամատից դեպի Երկինք...

Ահա ինչու է նրա գիրը դառնում հային ճակատագրված, որ բերում է մեր ժամանակի արյունլվիկ դեմքն ու կնճռոտ հարցադրումները: Եվ նա պատանեկան անկեղծությամբ, բայց հասուն մտքով գրում է. «Տե՛ս իրականությունը, նոր փորձիր սիրել... Կինոների մեջ չես տեսնի էս բոլորը, ուղղակի դո՛ւրս արի տնից կեսգիշերին, երբ Երևանը դադարում է թաքցնել: Քայլիր երկար, շնչիր խորը, նայիր ուշադիր, քաղաքը խոսում է: Ինձ հոգեհարազատ է իմ մեղավոր քաղաքը, ու ես իմ արմատները այստեղ եմ ձգելու»:

Բայց Շանթին վերապահված էր լինելու մի ուրիշ աստղի նշանի տակ, որովհետև հայ լինելը, հայ զինվոր լինելը հենց այնպես չի լինում...

Նա դառնում է մերօրյա պատերազմի վավերագրողը, և ի պատիվ իրեն՝ ինքնաբուխ գեղարվեստական վավերագրողը. «Հիմա մենք ենք կինոյի տղերքը, որոնց հույսով քնում ու արթնանում է մի ամբողջ ազգ»: Կամ՝ «Սաղավարտը դարձել է մարմնի մաս, որից երազում էինք ազատվել ու որով մեզ ապահով էինք զգում:

Ուշագրավ են նկարագրություններից բխող նրա գեղարվեստական ընդհանրացումները. փայլուն օրինակ է պատերազմի դաշտում վառվող նռենու դրվագը, ապա և հետևությունը. «Տպավորություն է, որ ընկեր եմ կորցրել»:

Շանթը ենթագիտակցորեն Նռենին դարձրել է կենաց սիմվոլ, որի պտուղը չհասցրեց ճաշակել... Կյանքի ու գաղափարի կռիվն է նրա մտքում, և շարքային զինվորից ծնվում է անմահը:

Այո՛, ժամանակը մեզնից պահանջում է լինել հայրենյաց մահապարտ, որովհետև Հայ լինելը հենց այնպես չի լինում... Այս գիտակցումն ուներ Շանթը, նրա հետ ու նրա նման՝ անպարտ հայորդիք...

Առհասարակ սահմանային իրավիճակներում բացվում, սրվում են մարդու միտքն ու երևակայությունը, բայց զինվորի հուշագրերում չկա ոչ մի հորինում... Կյանքը վեր է հորինումից. կողքիդ պայթող նռնակներ են, արկեր, և վերջին փամփուշտն է դառնում ելք...

«Փամփուշտները հանեցի գրպանիցս ու տղերքին 1-1 հատով բաժանեցի՝ որպես երաշխիք հայրենի հողում հանգիստ քուն մտնելու համար...»:

Սրանով հանդերձ՝ Շանթի օրագրային գրառումները բացահայտում են նրա ինքնատիպ լեզվամտածողությունն ու բացառիկ դիտողականությունը, իրավիճակն ընկալելու խորագիտությունն ու նրբազգաց հոգին:

Ինքը մահվան դեմ է կռվել ու մահվան հետ ապրել, ու լույսերի մեջ է, նրա հետ՝ նաև իր զինակից ընկերները: Նրանց անունը Լեգեոն է...

Սարսռուն է նրա տիեզերական խորը հիշեցումը. «Հպարտ եմ, որովհետև մեր հավերժությունը Աստծո ձեռքում է»:

Շա՛նթ Նավոյան, թևավո՛ր, պատերազմի աստծո բարկությա՛ն շանթարգել, փառքիդ թռչունը սավառնում է բարձունքներում, իսկ կարոտիդ ու նվիրումիդ տատրակը ահա այստեղ է՝ իջել է մորդ փխրուն ուսին, որ այնպես ուզում եմ գրկել»:

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Հարցազրույց ամերիկաբնակ հայ արձակագիր Մարգարիտ Դերանցի հետ

-Տիկի՛ն Մարգարիտ, ձեզ ճանաչում է հայ ընթերցողը, և արդեն ձեր գրքերը նաև սիրո են արժանացել: Ե՞րբ զգացիք, որ կարող եք ստեղծել տող, որին սպասում է ընթերցողը:

-Գրել սկսեցի հոգեբանական բարդ սահմանագծում, երբ լքեցի կյանքիս հարմարավետ գոտին, որը Հայրենիքն էր, թեկուզ դժվարություններով հանդերձ, հայտնվելով Միացյալ Նահանգներում՝ զավակներիս հետ: Այն հայտնագործություն էր ինձ համար այնպես, որքան Քրիստափոր Կոլումբոսի համար նոր հայտնագործած «Հնդկաստանը»: Տարագրության անքուն գիշերներում լույս ծագեց՝ դա իմ գրելն էր: Այն ինքնաբացահայտում էր, ինքնաճանաչում և կյանքիս կարևորագույն հրաշքներից մեկը: Չնայած դրան՝ այդ ժամանակ մտքիս ծայրով էլ չէի երազում ո՛չ գրքերի, ո՛չ ընթերցողների մասին: Այդ ամենը իրականություն դարձան շատ տարիներ հետո:

-Վերջերս լույս է տեսել ձեր «Սեր Լուսնեզրին» վեպը: Ինչպե՞ս ծնվեց այն, և ո՞րն է վեպի ասելիքը:

-«Սեր Լուսնեզրին» վեպը քառասնամյա կնոջ կյանքն է մինչև 2020 թ. մայիսը, ԽՍՀՄ-ի քայքայման, դրա հետևանքով այնտեղ ապրող մարդկանց հոգևոր ցնցումների համատեքստում, մասնավորապես՝ պատերազմ, բլոկադա, սոցիալական թշվառություն անկախացած Հայաստանում, գոյության պայքար, զանգվածային տեղաշարժեր: Վեպի գլխավոր հերոսուհին միլիոնավոր մարդկանց պես դեռահաս տարիքում ընտանիքի հետ արտագաղթում է Ռուսաստան, այնուհետև երիտասարդ տարիքում այնտեղից մեկնում է ԱՄՆ՝ բախտ որոնելու: Վեպը սոցիալ-հոգեբանական բովանդակություն ունի, որը հերոսուհու կյանքը դարձնում է գեղարվեստական անդրադարձ այն ցավոտ իրադարձություններին, որոնք տեղի են ունեցել աշխարհում այդ թվերին: Այն պատմում է Նահանգներում գլխավոր հերոսուհու և նարցիստական բնավորությամբ տաղանդավոր գրող-տղամարդու տասը տարի տևող սիրո ու ատելության հարաբերությունների մասին: Կարելի է ասել, որ վեպը խոսում է սիրո մասին «ամբողջի», համայն աշխարհի ոսպնյակի միջով: Գրավիչ, հետաքրքիր, բուռն գործողություններին զուգահեռ վեպում ընթանում է նաև երիտասարդ կնոջ անցած կյանքի խոհափիլիսոփայական հիշողությունները Հայաստանի, Ռուսաստանի մասին, ուր ընթերցողին ներկայացնում է հերոսուհու մանկությունը, նրա ընտանիքի, հարազատների պայքարը օտարության մեջ գոյատևելու, չկործանվելու մասին, սեփական ինքնության տքնաջան որոնումը:

«Սեր Լուսնեզրին» վեպը սիրային, բազմաշերտ հոգեբանական վեպ է աշխարհում տղամարդ-կին ճակատագրական հարաբերությունների, մարդու և Հայրենիքի բարձր իդեալների, նաև ժամանակակից արագընթաց աշխարհում անհատի օտարացման, անկումների, կործանման մասին: Աստծո արքայությունն իր մեջ կրող մարդը նաև կրողն է չարիքի ու արատների, ուստի աշխարհը փոխելու առաջին քայլը մարդու ինքնահաղթահարումն է հավերժական արժեքների միջոցով, որոնք են Սերը, Կարեկցանքը, Գթասրտությունը:

-Սիրո գիծը ձեր ստեղծագործություններում տարբեր ուղղություններով է ընթանում: Ինչպե՞ս է ստացվում, որ այն դարձնում եք իրական, շոշափելի, բայց միևնույն ժամանակ՝ համեստ ու չափավոր:

-Չափավորությունը և համեստությունը մարդկային այն հատկություններն են, որ բարձր եմ գնահատում կյանքում, բայց այս հատկությունները հակացուցված են ճշմարիտ, բարձր գրականության համար: Այն նշանավորը և հետաքրքիրը, ինչ վիճակվել է դիտել կյանքում, «անչափ»-ն է, տղամարդու և կնոջ սիրո իրարամերժ, տարօրինակ դրսևորումներն են: Ամենավեհ արժեքների մասին կարելի է գրել շինծու, կեղծ, գռեհիկ: Եվ մարմնի սիրատենչ կանչի, կրքի մասին կարելի է գրել ոչ միայն գեղագիտորեն բարեկիրթ կամ անկեղծ, այլև կարելի է այն վերածել գեղարվեստական ոգեղենիկ, բառային կերտվածքի: Մեր փառահեղ հայոց լեզուն անսպառ հնարավորություններ է տալիս: Սա գրողի ձգտումն ու ընձանքն է:

Սիրուց ատելության ուղին շրջադարձն է դրախտից դեպի դժոխք: Ատելությունը խելագարության պոռթկումն է, ոչնչացումն ու ինքնաոչնչացումը, նրա մագիլներում մեռնում է Սերը: Այնուհանդերձ գրքերիս մեջ լույսով ծածկվում է մութը, ատելության փլատակների վրա բացվում հույսի ծաղիկը: Օրինակ՝ «Սեր Լուսնեզրին» վեպի հերոսուհին՝ Մեգգի Սամուլյանն անգամ առերևույթ ու ակնառու պարտությամբ կարողանում է հաղթել ինքն իրեն, հետևաբար կյանքին ու ճակատագրին:

-«Այս արագընթաց աշխարհում կինը շատ բան ունի անելու». հարցազրույցներից մեկի ժամանակ ասել եք դուք: Ամենաշատը ո՞ր հարցերում է թերանում կինը:

-Կինը մայր է, դուստր, տատիկ, քույր, բարեկամուհի, աշխատակցուհի, մասնագետ, քաղաքացի: Փորձում ենք չթերանալ ոչ մի կոչման մեջ, որը թերևս անհնար է…

44-օրյա պատերազմին, հատկապես պարտությունից հետո, մեր կանայք, մայրերը ծանրագույն օրեր են անցել: Թող ապրելու զորությունը իշխի մեր ժողովրդի վրա, ապավինենք Տիրոջ գթառատությանը, ամեն բացվող օր ընդունենք որպես շնորհատու քաղցրություն: Այս դժնդակ օրերում, իրարամերժ աղմուկի մեջ այնքան կարևոր են կանանց ներքին լույսը, սերն ու կարեկցանքը, որ սպեղանի և մխիթարություն կբերեն խառնաշփոթ, քաոսային մեր հասարակությանը:

Զրուցեց
Վովա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԸ



ԳԵՎՈՐԳ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Առաջին գիրքս տպագրվել է արդեն հեռավոր 2003 թ.-ին, երբ բավականին ջահել էի: Նախքան գիրք ունենալը էդ ինչպես էի տանջվում, մտահոգվում, գրածս բանաստեղծություններն արդեն խեղդում էին ինձ և անպայման ցանկանում էին ներկայանալ հավաք տեսքով՝ մեկտեղ, ինձանից դուրս: Գիրք ունենալը էն ժամանակներում համարյա թանկ հաճույք էր, և շատ քչերն էին էդ սին հաճույքը վայելում:

Գիրք ունենալու առումով իմ բախտը բերեց. առաջին գիրքս տպագրվեց «Մուտք» մատենաշարով՝ շնորհիվ արքեպիսկոպոս Մ. Աշչյանի, չորս գրքերս տպագրվեցին պետական աջակցությամբ, հինգերորդը լույս տեսավ բարի կամքի դրսևորման արդյունքում. ես կազմակերպեցի դրամահավաք, ընկերներս ու ընթերցողներս չզլացան գումար փոխանցել, իսկ վերջինի դեպքում, որ էս տարվա նոյեմբերի մեկին ծնվեց, մեր մեջ ասած, մեղրի կարասն ընկա. գիրքս տպագրեցի և ինձ կլորիկ հոնորարով պարգևատրեցի: «Վրիպումներ»-ս (գրքիս վերնագիրն է) հրատարակվեց ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Աջակցություն ստեղծագործողներին և հետազոտողներին» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Ինչևէ, տարիները գլորվեցին, ու տասնութ տարվա մեջ հրատարակեցի վեց գիրք, այսինքն՝ երեք տարին մեկ՝ մի գիրք, ինչը քանակի առումով էնքան էլ վատ չէ, կարևորը ես իմ չափը գիտեմ և ամեն տարի գիրք չեմ թխում:

ախագրություն

ավե Բանաստեղծություն
մահվան գնացողները
ողջունում են քեզ
ախ

***

արհեստական շնչառության
ոչ մի սարք
այլևս չի փրկի
իմ զառամյալ մուսային
ախ

***

ջահել մուսաներ
ոգեղեն մի նպաստ
ողորմացեք
ներշնչանքը կորցրած
բանաստեղծին
ախ

***

հիսուն միլիոն տարի հետո
տեսնես
գոնե մեկ ընթերցող կունենա՞մ
ախ

***

եթե
բանաստեղծությունները
գրվեին և անմիջապես չքվեին
գրվեին և անմիջապես չքվեին
տեսնես
քանի՞ հոգի կգրեին
ախ

***

փառահեղ բոյս տեսնելով
ևս մի ընթերցող խոստովանեց
թե ինձ կարճահասակ էր պատկերացնում
ախ

***

հեյ գիտի ժամանակներ
առաջ ես էի ասում
մի խռմփցրու
մի խռմփցրու
հիմա ինձ են ասում
ախ

***

ոչ մի ոչ մի
ոչ մի ոչ մի
ոչ մի ոչ մի
գրչակ գրամոլ
երկրորդական
երրորդական բանաստեղծ
գլխի չընկավ
որ էս օրերին
կարելի էր
հանգիստ խղճով
ոտները տնկել
ախր ախր ախր
ախր ախր ախր
տարիներ հետո կգրեին
էս ինչ բանաստեղծը մահացավ
էն օրերին
երբ կորոնավիրուսն էր
ստեղծագործում
ես ես ես
ես ես ես
կմեռնեի
բայց էրեխեքս
ախր ախր ախր
ախր ախր ախր
փոքր են շատ
համ էլ համ էլ
համ էլ համ էլ
ես թքած ունեմ
ախ

***

մենակ մնացած հորս հետ
մեկ օրով առանձնանալու
նպատակով
մեր տնից
մերոնց գնացի
մոտավորապես 5-6 կմ
ճանապարհ
ձևաթուղթն իհարկե
նախօրոք լրացրել էի
և անձնագիրս էլ
ծոցագրպանումս էր
ոչ մի ոստիկան չկար
և ոչ ոք չհարցրեց
յո՞ երթաս զավակս
էս ամայի քաղաքով
ախ

***

այ հեր
կապույտ վազի դեղերը
օրական երեք անգամ
մեկ կոճակ
սպիտակ վազինը
նորից երեք անգամ
բայց երկու կոճակ
չէ ուշադիր լսե
վազերի տակ նկարել եմ
կապույտը մեկ կոճակ
սպիտակը երկու
չէ ճնշմանը արդեն խմել ես
չէ չէ չէ
սպիտակը երկու
կապույտը մեկ
բայց երկուսն էլ երեք
չէ կապույտինը երկու հատ չխմես
սպիտակինը պիտի խմես
չէ ճնշմանը երեկոյան պիտի խմես
այ հեր կողքի պառկի սրսկեմ
աչքի կաթիլները չմոռանաս
ախ

***

համենայնդեպս
կնոջս ասեցի
աշխատավարձիս
քարտի կոդը
ախ

***

էս շոգին
հա խմում եմ
խմում
իհարկե օղի
շոգը չգիտեմ ինչու չի նահանջում
ախ

***

անքնություն
էի
էս վերևի Գայանն
ինչդ կապրի
կինս թե ընչի՞
ընչի
ընչի
լրիվ պառվցել է
մոտը եկող
էլ չունի
ախ

***

նրա բանաստեղծությունը
սկզբից թարգմանվեց այբբերեն
հետո այբբերենից
թարգմանվեց բեներեն
այնուհետև բեներենից
մի քանի հոգի
թարգմանեցին այն գիմերեն
որոշ ժամանակ անց
գիմերեն իմացող
միակ դա բանաստեղծը
այն թարգմանեց դաերեն
դաերենից թարգմանվեց եչերեն
եչերենից զաերեն
զաերենից էրեն
էրենից ըբերեն
ըբերենից թոերեն
……
……
ուերենից փյուրերեն
փյուրերենից քեերեն
տարիներ անց
աշխարհահռչակ բանաստեղծը
ամենևին չճանաչելով
իր անուն-ազգանունը
իր անառակ որդի-բանաստեղծությունը
այն թարգմանեց բնագրով
և նախանձից մեռավ
ախ

***

զարմանալի է
իմ համարյա բոլոր գործերի տակ
կարելի է հանգիստ գրել
ախ

ՀՈԳՈՒ ՍԱՐՍՈՒՌՆԵՐ

...Ու երգս տառ առ տառ հյուսված
Շիրակի հանդերից ոսկեգեղմ...
Հարություն Սարգսյան

Նա է, իր բառերով՝ «Շիրակցի հայածին առյուծ բանաստեղծը»: Վեհություն կա տողերի մեջ, հոգու խռովք ու հավատ: Ինքնազոհություն, որ առաջին հերթին որդուն դեպի հաղթանակ, դեպ հայ հողի փրկություն ճանապարհելու զուսպ հպարտությունն է. «Հերոսացի՛ր, որդի՛ս, առյո՛ւծ մնա զորեղ...»:

Հարություն Սարգսյանի «Հոգու սարսուռներ» գրքի շարքերից առաջինը՝ ժողովածուի համանուն վերնագրով, իրապես հայ հոգու արդիական սարսուռներն են՝ մերթ զավակին կոչելով դեպի հայրենիքի փրկության, մերթ մատնացույց անելով հայ հոգեկերտվածքի վեհության խորհրդանիշ Մասիսի ճերմակ անաղարտությունը, մերթ էլ, ինչպես բնականաբար եղել է հայ իրականության, ապա նաև՝ գրականության նման շրջաններում, ոգեկոչումը անցյալի պայքարի, հաղթանակների, գենետիկ ուժի՝ հավատով լեցուն: Հատկապես ուշագրավ են Վահրամ Պահլավունի իշխանին, Մարմաշենին ու Վահրամաբերդին ձոնված բանաստեղծությունները, որոնք հայրենասիրական ամբողջական էջի վրա առանձնանում են որպես մեկ պատառիկ՝ սիրո՝ մոր սիրո չափ, հերոսացման, հավատի և ուժի, հավատ, որ «Լողորդ կդառնա թռչող թևերով, // Սևանից Վանա լիճը կլողա, // Նա ետ կբերի Անին ու Ղարսը, // Մասիսը հայից օտար չի դառնա»: Իսկ որտե՞ղ է այս վստահության ակունքը. պատասխանը կրկին հեղինակի տողերում է. «Հայն իր սրտի մոմը աղոթքով է վառում, // Թեկուզ լինի գլխին օտար սարի»:

Եվ ցավոտ, այլևս բաց վերքը հայ հոգու՝ Շուշի: Զարմանալի կլիներ, եթե բանաստեղծը չխոսեր իր տեսակի հայի երակի վրա մնացած չապաքինվող, դեռ չսպիացած այս վերքի մասին. «Քեզ՝ վիրավո՜ր իմ հող, // Իմ սրտից են պոկել...», նաև՝ «Իմ Շուշին», «Հող իմ, ես էլ քեզ պես», «Ճերմակ-ճերմակ...», «Վերջին մարտը» բանաստեղծություններում, որոնցում, հեղինակի իսկ խոսքերով, «...արնահոսող վերքերից խորունկ հազարանում է վրեժը ազգի...»: Սակայն, այս ամենով հանդերձ, գրողի բոլոր մտքերում առկա է հաղթության ոգին, ինչպես ինքն է ասում, հաղթով տուն են դառնում, կամ... հաղթով հասնում են երկինք... Այստեղ հայի պատմությունն է այսօր և երեկ, այստեղ բողոքն է առ Աստված, անձայն բողոքը՝ կրկին խորին հավատով աներեր: Եվ բնականաբար, մարտադաշտ, խրամատ, կարոտ, արնածոր ընկերներ ու զավակներ, վրեժի, հատուցման անհագ ծարավ ու... հավատ... հավատ՝ «Մի օր կարծվանամ» մեծախորհուրդ կարգախոսով:

Հետո լուռ թախիծն է կաթկթում բանաստեղծի հորինված կամ իրական անդունդում /«Հորինված անդունդ» շարք/, ու կաթիլքի ձայնն անգամ լսելի է: «Կանգ առ, ժամանակ». գուցե թե սա է այս շարքի բարձրակետը, որի շուրջը բզզում է մարդկային լուռ տխրությունը, երբեմն լռությունն անգամ ու թախիծը ակամա /«Այնպես կուզեմ», «Կանգ առ, ժամանակ» և այլ գործեր/, որ ծորում է մելամաղձոտ երազներից, որ ակունքվում է հարթմնի կյանքից՝ անխուսափելիորեն իրական-իրական: Սկիզբը կամ ավարտը պայծառ լուսաբացի երազանքի:

Եթե առաջին մասում գրողի սերն է առ հայրենին, ապա երկրորդում ինքը գրողն է՝ ինքնաճանաչման հայտով. նա, առանց ավելորդ ծեքծեքումների, բաց տեքստով անցնում է ինքնաորոնման բարդ ճանապարհով՝ բացելով հոգու բոլոր խորխորատները՝ երբեմն մի տեսակ լռին հոգնությամբ, երբեմն ասես սպասումների խորտակվող նավով, երբեմն էլ՝ հուսալքությամբ, մենության, ներամփոփվելու անձայն ձգտումով: Բանաստեղծն է՝ աչքը գյուղի վանքի գմբեթի քիվին, հոգին՝ հայրենիքին, հավատը՝ ծխախոտի ծայրին... «Գրկի՛ր ինձ, մենությո՛ւն, քո անսահման մթնով, // Ջերմ պարուրի՛ր հոգիս անդորրությամբ քո տաք...»: Եվ Նա՝ Կինը՝ այնքան իրական: Անկումային տրամադրությանը բնականորեն հաջորդում է առավոտը՝ թեկուզ «սպառված»:

Առանձին նկար-պատկեր է հեղինակի՝ մորը ձոնված բանաստեղծություններից մեկը՝ «Մորս աղոթքը» վերնագրով: Խաղացկուն քամուց թրթռացող մոմեր, կերոնը վառողի դողացող ձեռք ու համահունչ դողացող աղոթք, իսկ հավա՞տը, հավատը վերջնամասում. «Խոստացա՞վ Աստված խեղճ մորս, // Որ կռվից տուն կգա որդին...»: Կրկին մայր, խտացած սեր, խտացած հավատ, խտացած-մոմահոտ հայացք առ Երկինք, որին տրամաբանորեն հետևում է զավակի աղոթքն առ Մայրը:

Եվս մեկ բանաստեղծություն՝ «Հաջողադրամ», հաջողադրա՞մ... Հեղինակն ասես օտար աչքերից թաքցնելու նպատակով, փակագծերում է շշնջում մեծագույն գաղտնիքը. «...Նա երբեք ու ոչ մի անգամ իմը չդառավ»: Հոգեբանորեն ազդեցիկ, պատմողի վարպետությամբ, կշռույթով նոր-վելի հավասարարժեք կամ պոեմի ուժով այս ստեղծագործությունը գալիս է իբրև ընդհանրացումամփոփում բանաստեղծի՝ այնքան համաչափորեն ես-ի բացահայտման, այստեղ ապրումներն են այնօրեական և այսօրեական, հուշերն ու կարոտները, կորստի ցավը, և պարզության մեջ գեղեցիկ է ամեն ինչ:

«Ոսկեփեշ արտերի երգը»: «Մի կարոտ, մի զեփյուռ, մի գարուն». բանաստեղծը, բնությունը, սերը, հոգեվիճակը, տրամադրությունը. շարքերի միջև ներքին կապը անժխտելի է, ամբողջին գումարվում է նաև սերն առ բերրի ու կույս մայր հողը. «Խոպան էիր, հո՛ղ իմ, ինչպես մի կույս փերի, // Հարս ես դարձել հիմա՝ ոսկեշորեր հագած...»: Եվ հողի նկատմամբ զուլալ սերը ի վերջո վերածվում է մաքրամաքուր աղոթքի. «Ա՛րտ իմ, լույսով դու լցվիր, // Ծեգին քեզ եմ աղոթել»:

Բնությանն առհավետ կապված՝ փոխվում է մարդը, այս անգամ մեծ առումով, և ապրված է գրքում ներկայացվող իրականությունը: Ի վերջո, սա ինքը պոեզիան է՝ գյուղական մաքուր կոլորիտով, մարդու հոգևոր հարստությամբ, տագնապներով: Մի իրականություն, որ, ցավոք, խաթարվել, խաթարվում է արտաքին ազդակների ներգործությունից, ինչը պետք է անմիջականորեն երևակվեր բանաստեղծի տողերում:

Եվ մեր կողմից առանձնացված ևս մեկ ստեղծագործություն. «Իջնեմ Արփաչայի ափին...»: Բակունցյան հնձանը, այս անգամ՝ չափածո, սերը՝ մաքուր, ամոթխած աստղերի պես, սերը՝ կիսատ, գուցե շարունակելի, բայց տաք-անաղարտ»: Հովվերգության կատարյալ մի պատկեր, այս ամենին գումարվում է նաև սահյանական բանաստեղծական շունչը, և պոեզիան իր վերջնական տեսքն է ստանում Հարություն Սարգսյանի ժողովածուում /«Պարեց աշնան քամին», «Գիշեր», «Ժայռի ցավը» ստեղծագործությունները/:

«Կարմիր թագուհի» շարքը կրկին սիրո ու սիրո կորստի, ամենամարդկային ցավի շարքն է, որտեղ հետաքրքիր են սահում թե՛ տողերը, թե՛ լռությունն անգամ չասված բառերի. «Ո՞ւր ես, հոգի՛ս, կարոտել եմ աչքերիդ...»:

Եվ եթե ընդհանրացնելու լինենք, ապա գիրքն ինքը հեղինակն է, և գրքում մեր օրերի մարդն է՝ ապրված իրականության, հույզերի ու զգացողությունների, զգացմունքների մի հյուսածո՝ մի կողմից, մյուս կողմից՝ հայրենիքի, բնության, հող ու ջրի անքակտելի կապը, ինքնատիպ ազդեցությունը նրա ես-ի, հոգևոր ներաշխարհի, անկումների ու վերելքների վրա:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Գուրգեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

***

Տատս կռիվն էր անիծում,
Ծեր հայացքն էր հեռվին գցում,
Հույսի հուրը բարկ:

Վերջացել էր կռիվ ու քաղց,
Ո՞նց թե որդին «անհայտ կորած»,
Ասե՞ղ էր բարակ:

Չէր էլ ուզում տանը պառկել,
Ախր որդին դարձած պատկեր՝
Նայում էր պատից:

Գիրկն առնելով զննում անվերջ,
Հայրիկիս էր փնտրում իմ մեջ
Հայացքը տատիս:

-Էս անտերն էլ թունդ տեղից է,-
Խաբում էր, թե բռնոթուց է
Արցունքը գալիս:

Տարիքի հետ տատս էլ անցավ,
Այն ամենը նոր հասկացա.
Ես նոր եմ լալիս:

ԿՈՒՐԱՑԵԼ Է ՊԱՏՈՒՀԱՆՍ

Կուրացել է պատուհանս,
Ո՛չ լույս կա, ո՛չ հույս,
Մայրս արդեն պատուհանից
Էլ չի նայում դուրս:

Տեսներ գալով՝ դուռն էր բացում
Մի քիչ թթվադեմ,
Ինձ տեսնելով՝ մայրս ներքուստ
Ուրախ էր արդեն:

Ներս առնելով քար էր աղում
Իմ գլխին՝ քամի,
Թե ինչո՛ւ եմ ես տուն գալիս
Այսքան ուշ ժամի:

«Ի՞նչ գործ ունի խելոք մարդը
Այս ժամին դրսում,
Չես էլ հիշում՝ մայրդ արթուն
Քեզ է սպասում»:

Դուրս եմ հանում ուշացումով
Բանալին մեր տան,
Գուցե մայրս դուռը բացի...
Հրաշքներ չկա՞ն:

***

Մթնահատակ մղումներով
Պրկված եմ, ինքնալեցուն
Եվ ճաքճքված տաք շուրթերով
Աղոթում եմ վերն Աստծուն:

Մեղսազերծված հոգով հիմա
Էլ դաշն չեմ աշխարհի հետ,
Այս վիճակում ամենօրյա
Դեռ չեմ դարձել... վերջնական խենթ...

ՇԻՏԱԿ ՔԱՄԻՆ

Քամին էլ հաստատ բանաստեղծ է մի,
Երգում է անտես ամենքիս համար,
Շիտակ է ինչպես շողը արևի,
Չես ծռի քամուն ձևով քեզ հարմար:

Մեկ մեղմանում է, մեկ էլ փոթորկվում,
Նա չի որոնում ո՛չ փառք, ո՛չ անուն,
Երբեմն ամպի վազքը փակելով՝
Գուցե և բարի գործեր է անում:

Չէ՛, քամի՛, հաստատ բանաստեղծ ես դու,
Բանաստեղծական խենթություններով,
Որտե՞ղ չես լինում, ինչե՞ր չես անում՝
Երբեք ինքդ քեզ չխնայելով:

Ես խղճում եմ քեզ, բայց և նախանձում,
Որ դու, գլուխդ էլ փշրելով պատին,
Փնտրում ես անվերջ քո ինքնությունը-
Գուցե և մի օր հասնես հավատիդ...

Քամի՛, դու միշտ էլ ղեկ ես ամպերին,
Քո կյանքի դերը խաղում ես դրսում,
Քամի՛, նման ես եղանակներին՝
Դու ո՛չ շոգում ես և ո՛չ էլ մրսում:

ԽԱԲՎԱԾ ՈՐԲՈՒՀԻՆ

1.

Արցունք ես համակ
Այրումով անվերջ,
Սեղմում է սիրտս
Ձղջումը քո խեղճ:

Ասես թե լինես
Ավերված ավար,
Քանդ ու քարափ է
Սրտումդ խավար:

Թարմ հուշիդ վիշտն է
Սրտիդ ծանրացել,
Դաժանությունն է
Քո դեմ ծառացել:

Չէ՞ որ դու լողալ
Չգիտեիր, խե՛նթ,
Առուն չտեսած՝
Ծով մտար, անգե՛տ:

2.

Փախել եկել ես ինձ մոտ,
Վա՛խ միայնակի,
Նորից չգա՛ն, չտանեն
Գուբը դժոխքի...

Քեզ կպահեմ ես ինձ մոտ,
Հապա թող փորձեն...
Ստվերիդ էլ թե մոտ գան,
Պիտի հատուցեն:

Խորին ցավ է՝ մայր չունես,
Որ քեզ ամոքի,
Շատերն են թուրք աշխարհում՝
Անխիղճ, անհոգի:

Ծվարել ես գրկիս մեջ,
Ի՞նչ հարցնեմ ես,
Անխղճորեն լլկել են,
Անարգել են քեզ:

Խաղա՛ղ մնա գրկիս մեջ,
Աչքդ չթացվի,
Թող ափերս չլիզեն
Արցունքդ լացի:

Քեզ կպահեմ, կսփոփեմ
Աղջկաս հանգույն,
Միշտ չես մնա մոլորված,
Ձահել ես, սիրուն:

Ժամանակն է միշտ հարթում
Սխալը կյանքի,
Քե՛զ էլ, քե՛զ էլ կբուժի,
Ուժ կտա կամքի:

***

Կարծես թե կա,
Բայց չի ծագում արևը,
Հեռվում կայծակ,
Ու չի թափվում անձրևը:
Անհամբեր ես,
Սպասում ես հրաշքի՞,
Այդ դու էիր՝
Երևացիր իմ աչքին:

ԹԵՎԱՎՈՐՆԵՐ

Թևավորները նախանձ են շարժում,
Չունեն անձնագիր (այդ հոգսից դուրս են),
Եվ հողագունդն է հայրենիքն իրենց,
Որտեղ հարմար է՝ բույներ կհյուսեն:
Հարկեր չեն մուծում թռիչքի համար,
Պարիսպ-պատնեշից գաղափար չունեն,
Համայնական է երկնի եթերը,
Անհատույց, անվարձ միշտ թռիչք ունեն:

ՔԱՄԻՆ

Ավազակի պես և ոչ մարդկային
Դուռս կրկին բաց արեց քամին,
Ավար է փնտրում՝
Ի՞նչ տանի տանից,
Իսկ քամու համար
Ի՞նչն է պիտանի...
Հոգսս թող տանի, թախիծս մոլոր,
Կիսատ ու լրիվ երեգերս բոլոր,
Տառապած սերս՝ սին ու անբերրի,
Միայն պայմանով, որ հետ չբերի:
Քամի՛, տար խիղճս՝ իմ մտերմուհուն,
Հիշողությունս՝ մնամ առանց հուն,
Տար ունեցածս, չեմ առարկի ես,
Եվ դու դատարկը հեշտ կթռցնես:

ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐ-ԽՈՐՀՐԴԱԿԱՐԳԵՐ

Մարդը ապրում է երկու աշխարհների միջև. առաջինը իրական աշխարհն է, իսկ երկրորդը մարդածին է՝ խորհրդանշանների աշխարհը: Մարդու երկակի էությունը կարիք ունի մղիչ ուժի, և կախված այդ ուժի բնույթից ու հանգամանքներից, ձևավորվում է աշխարհայացք, սակայն մարդկային միտքը ի զորու չէ ներթափանցել որոշ երևույթների և իրերի խորքը, բացահայտել նրանց փոխկապակցվածությունը: Ուստի մարդը դեռևս նախնադարից սկսյալ ստեղծեց նշանահաղորդակցման նոր համակարգեր: Նախնադարյան բոլոր գաղափարախոսությունների, բոլոր ուսմունքների մեջ կարևորագույն դրույթներն ու տեսակետներն ամենուրեք քողարկված էին էզոթերիկ (գաղտնի) սիմվոլների շղարշով՝ սիմվոլիկ լեզվով: Այդպիսին է նաև ժայռապատկերների լեզուն, որոնք իրենց սյուժետային կոմպոզիցիաներում անդրադարձնում են մեր հեռավոր նախնիների բնապաշտական պատկերացումների ողջ համակարգը:

Փորձենք վերլուծել հին աշխարհում լայնորեն տարածված կարևորագույն սյուժեների որոշակի խմբեր, որոնք արտացոլում են, այսպես կոչված, տիեզերական աղետի առասպելը: Գաղափարագրերը կասկած չեն թողնում, որ կենտրոնական տեսարանները շատ դեպքերում խորհրդանշում են երկնային տարերքների կռիվը կենդանական սիմվոլներով: Հնագույն ժամանակներում, ամենուրեք նախնադարյան տարբեր մշակույթների հուշարձաններում արևն ու լուսինը պատկերվել են իբրև երկրաչափական համասեռ մարմինների՝ ամենաբազմազան ձևերով, որոնք ժամանակի ընթացքում դարձել են սիմվոլներ կամ նշանագրեր: Թռչունը համարվում է արևի կենդանական սիմվոլներից մեկը և համարժեք իրավունքով կարող է կրել «արեգակ» գաղափարը՝ իր վրա վերցնելով նրա ֆունկցիաները:

Նախնադարյան պատկերացմամբ երկիրն ու երկինքը, օվկիանոսն ու ծովը, տիեզերքն ու անդրաշխարհը համընդհանուր մի երևույթի տարբեր մասեր էին: Այդ պատճառով էլ պաշտամունքային հուշարձաններում և այնուհետև նշանագրության մեջ երկրային էակներն ու երևույթները նույնանում էին երկնայինի հետ: Մարդը թռչունների ու կենդանիների միջոցով պատկերում էր երկնային աշխարհն ու այնտեղ տեղի ունեցող կատաղի կռիվը Բնության չար ու բարի ուժերի միջև:

Նախնադարի մարդիկ, իրենց ժամանակին ու մակարդակին համապատասխան, բավականաչափ պատկերացում ունեին երկրի ու երկնքի մասին, գերազանց կողմնորոշվում էին տեղանքում, գիտեին արևի ու լուսնի պտույտը, մոլորակների ու աստղերի շարժը, գաղափար ունեին կենդանակամարի, տարվա եղանակների ու ամիսների մասին: Սա, նախնադարյան իմաստով, գիտական կարողություն էր, որ մարդը կարողացել էր կուտակել երկինքն ու երկիրը դիտարկելու տասնյակ հազարամյակների արդյունքում, երբ նրա բնակավայրը մայր հողն էր, տանիքը՝ երկնակամարը, ստնտու մայրը՝ գետն ու անտառը, իսկ երազի աշխարհը՝ աստղազարդ երկինքը, ինքն էլ բնության անմիջական ու հարազատ մի մասնիկ, որը առաջնորդվում էր նաև խորհրդանիշներով:

Խորհրդանիշը կոդ է, ծածկագիր, որը ստեղծվել է մարդկային կյանքի համընդհանուր կենսաբանական և հոգեբանական հիմքի վրա, որպես մտավոր ու հոգևոր հաղորդակցման միասնական պատկեր:

Խորհրդանիշի ընկալումը նաև անհատական է՝ պատմական կենսահոգեբանական, մտավոր ներունակությունների հետևանք: Այն ներդաշնակում է գիտակցականի և ենթագիտակցականի ազդեցությունները, բնազդային և հոգևոր ուժերը, որոնք ցանկացած մարդու մտակառույցում պայքարում են միմյանց դեմ կամ գտնվում հաշտության հավերժական ճանապարհին: Եվ որ ամենակարևորն է, իրար է կապում անհատականը համամարդկայինին:

Միևնույն խորհրդանշանը կարող է ունենալ բազմաբնույթ կիրառություն և կրել էզոթերիկ (ծածուկ) և էկզոթերիկ (հրապարակային) բնույթ: Խորհրդանշանը բացահայտում է՝ թաքցնելով կամ թաքցնում՝ բացահայտելով այնպես, որ զգացմունքը կարողանում է ըմբռնել թե՛ մեկը, թե՛ մյուսը: Սիմվոլը լեզուն է, մարդկային հայտնի բոլոր լեզուներից ամենահամակողմանին ու ամենահզորը: Խորհրդանշանները դասակարգվում են հետևյալ խորհրդակարգերի՝ Երկրաչափական խորհրդակարգ, Կենդանիների խորհրդակարգ, Թռչունների խորհրդակարգ, Բույսերի խորհրդակարգ, Քարերի խորհրդակարգ:

Երկրաչափական խորհրդանիշները նախնական ընկալումների, դիցաբանական մտածողության արդյունք են, որոնց միջոցով մարդը փորձել է բացատրել իրերի և երևույթների ներքին կարգն ու բնույթը, նրանց փոխադարձ կապը, հերթականությունը, շարժման ուղղությունը, ներդաշնակությունը, ժխտումը, փոխակերպումը, տեղաշարժումը և այլևայլությունը:

Երկրաչափական բազմաթիվ խորհրդանիշներ՝ պարույրը, սվաստիկան, շրջանը, կիսալուսինը… փիլիսոփայական, ալքիմիական, աստղագիտական գիտությունների հիմնարար հասկացություններից են:

Երկրաչափությունը գոյանում է անշարժ շարունակական քանակից: Անշարժն է շարժման հիմքը, որովհետև ամեն ինչ պատրաստ է շարժվելու, շարժումը սկիզբ է առնում դադարից ու անշարժից: Երկրաչափական խորհրդանշաններն օժտված են հուզականությամբ ու շարժմամբ, որոնց ուղեկցությամբ ի հայտ է գալիս գաղտնազերծվող իմաստությունը՝ բազմանշանակ էությամբ:

Կենդանիների պաշտամունքի նախնական դրսևորումը գիտության մեջ անվանվում է տոտեմիզմ: Տոտեմն այս կամ այն կենդանին կամ բույսն է, որն ընկալվում է որպես էտալոն, որը կարող է խորհրդանշել անվտանգություն, բարեկեցություն և որոշակի բնավորություն՝ ընդհանուր առմամբ և յուրաքանչյուր անհատինը առանձին վերցրած:

Խորհրդակարգում կենդանիների դասակարգման առավել հիմնավոր և համընդհանուր ճանաչում գտած տեսակետը կապված է բնության նախաստեղծ չորս տարրերի՝ հողի, ջրի, օդի և կրակի հետ.

Մտացածին կենդանիների խորհրդակարգը կապված է Բնության երևույթների (ջրհեղեղ, երկրաշարժ, հրդեհ, փոթորիկ, կայծակ) հաղթահարելու և հնազանդեցնելու մարդու երևակայական պայքարի հետ:

Խորհրդանշանային մտածողության բարձրագույն աստիճանը ալքիմիան է՝ չավարտված մի գիտություն, որի գերխնդիրն է ներթափանցել «գոյի կենտրոնը» և իրականացնել տիեզերքի «քիմիական մոդելի ստեղծումը»: Ալքիմիկոսն իր փորձանոթում փորձում է վերարտադրել աշխարհաստեղծ գործընթացի մոդելները, տիեզերքի կառուցվածքը: Ալքիմիայի հիմքում միկրո և մակրո տիեզերքների սուբստանցիայի՝ փոխակերպվելու և անընդհատ նոր ձևեր առաջացնելու հատկությամբ օժտված հիմնանյութի մասին հնագույն պատկերացումն է: Աշխարհի բոլոր գոյացությունները ըստ այդ տեսության առաջացել են նախաստեղծ չորս տարրերի՝ հող, ջուր, օդ, կրակ, իսկ հետագայում նաև մետաղ ու երեք հոգևոր համարվող տարրերի՝ աղ, ծծումբ, սնդիկ զուգորդությամբ ու փոխակերպմամբ: Չորս նախաստեղծ տարրերից է կազմված նաև միկրոտիեզերքը՝ մարդը:

Ալքիմիայում խորհրդանիշներն ունեն երկու հիմնական գործառույթ. ծառայում են մտքին՝ հաղորդակից գաղտնիքը ծածկագրելու համար, իմացության միջոց են ու ճանապարհ դեպի ճշմարտություն:

Թռչունների խորհրդակարգ

Երկնքում թևելու կարողությամբ օժտված թռչունները մրամնավորում են երկրային ծանրությունից ազատվելու, ամենաբարկ ոլորտները բարձրանալու, անսահման ազատության հասնելու մարդու այդպես էլ չիրականացվող ձգտումը:

Բանահյուսական ու դիցաբանական ընկալումներում թռչունը խորհրդանշում է դրականը՝ ուրախություն, անսահման երևակայություն, հոգևոր բարձունք, ոգեկոչում, մաքրագործում: Թռչունն առաջին հերթին զուգորդվում է երկնքի և նրա բաղկացուցիչների՝ արև, լուսին, աստղեր տիեզերական հասկացության հետ:

Կյանքի շարունակության խորհուրդը թռչունը մարմնավորում է ձվի խորհրդանշանի հետ: Ինչպես ձուն, այնպես էլ հատիկը խորհրդանշում են կյանքի նախաստեղծ գոյաձևը, արարման սկզբունքը: Թռչունը նաև հոգու խորհրդանշանն է, որը մարմնավորում է գերբնական ուժ, անխոցելիություն, անպարտելիություն, հավատարմություն և այլ հատկանիշներ:

Հավատարմության գեղեցիկ ու ցայտուն օրինակ է արագիլների պահվածքը, որով բնությունը օժտել է նրանց: Արագիլների ուխտը անխախտ է: Երբ երիտասարդ արու արագիլը սկսում է սիրահետել էգին, նա որպես իրենց հավերժական միաբանության խորհրդանիշ ընտրում է շրջակայքի ամենագեղեցիկ, նախշուն ու փոքր քարը և կտուցով նվեր մատուցում արդեն իսկ համաձայնության նշաններ ցույց տված էգին (որպես նշանադրության մատանի): Այն ընդմիշտ տեղադրվում է նրանց համատեղ կառուցվելիք բնում՝ դառնալով հիմնաքար:

Գույնը թռչունների խորհրդակարգին նոր՝ լրացուցիչ իմաստ է հաղորդում: Այն ունի նաև տարբերակիչ հատկություն. սպիտակ կենդանիներ զոհաբերվում էին բարի, սևերը՝ չար աստվածներին: Թռչունը ալքիմիայում մարմնավորում է աշխուժացող ուժերը: Թռչունի դիրքն օգնում է հասկանալ նրա կերպարի իմաստը: Թռչունը, որպես հոգու, բարձրագույն իմացությունների, աստվածային կամքի դրսևորման, կանխագուշակումների, ուրախության, մտքի, երևակայության, մահվան և անմահության, կերպարանափոխության և համանման այլ խորհրդանշաններ՝ ընդգրկում և անփոխարինելի տեղ ունի մշակույթի և արվեստի բոլոր ժանրերում:

Բույսերի խորհրդակարգ

Բուսականությունը՝ որպես կենսունակության ու գոյության նախապայման, օրինաչափորեն համարվում է մարդու երկրպագության ու պաշտամունքի առարկա: Բուսականությունը մեռնող-հառնող դիցաբանական հասկացության նախատիպն է, կյանքի շարունակական, անընդհատ վերանորոգվող հավերժական շրջապտույտը:

Խորհրդակարգում հիմնարար նշանակություն ունի ծաղկաբույսի և գույնի հարաբերակցությունը: Այստեղ ամենամեծ տեղը հատկացված է կանաչին՝ որպես բնության, կյանքի խորհրդանիշ: Ընդունված է այն կարծիքը, որ կանաչը միավորում է մտապաշարի սառը կապույտը՝ արևի դեղին զգացմունքային տաքության հետ, որպեսզի ի հայտ բերի իմաստությունը, մաքրագործումը, հույսը, հավատը, կյանքի մշտական նորոգությունը: Ծաղկի խորհրդակարգում որոշիչ դեր ունի ոչ միայն գույնը, այլև հոտը, կառուցվածքը, ծաղկաթերթերի քանակը և արտաքին այլ հատկանիշներ: Ալքիմիայում սպիտակ ծաղիկն արծաթն է, կարմիրը՝ ոսկին, կապույտը՝ տիեզերքը և տիեզերական ձվից աճող իմաստությունը: Ծաղկի խորհրդակարգում առանձնակի նշանակություն ունեն ոչ միայն արտաքին հատկանիշները և բուսական գործառույթները, այլ նաև նրանց մեջ պարունակվող բուժական և հոգետրոպիկ հատկանիշները:

Ծառը տեղադրվեց տիեզերքի կենտրոնում՝ վերարժեքավորվելով որպես համաշխարհային առանցք, որն իրար է կապում վերի և վարի աշխարհները: Ծառի հետ կապված է նաև դիցաբանական մտածողության և աշխարհի եռաչափ ընկալումը՝ անդրաշխարհ, երկիր, երկինք: Եվ նույն սկզբունքով՝ անցյալ, ներկա, ապագա հասկացությունները:

Քարերի խորհրդակարգ

Քարերը, ժայռերը, ի տարբերություն մարդու ծերացող, մեռնող և անհետացող մարմնի, ամրության, երկարակեցության և հավերժության խորհրդանիշեր են: Որոշ քարեր մարմնավորում են տիեզերքի արարչական ուժերը, ինչպես մարջանը՝ ջրային աշխարհը, մագնիսաքարը՝ տիեզերական ուժերի, երկնային լուսատուների ու մոլորակների շարժման կերպարանափոխությունը, ուժը, իշխանությունը: Լաջվարդի մուգ կապտավուն գույնը խորհրդանշում է քարի երկնային ծագումը և Բնության Աստվածային ուժի մարմնացումը: Եգիպտական դատավորները իրենց վզին կրում էին այդ քարը «Ճշմարտություն» մակագրությամբ: Թանկարժեք քարերն իրենց որակական հատկություններով խորհրդանշում են բարձրագույն գիտելիքները և հոգևոր առաքինությունները: Վիշապ քարակոթողները՝ առնվազն չորս հազար տարվա խորքից ներկա են պատմական Հայաստանի բարձրադիր վայրերում: Աստվածայինի հետ ունեցած հանդիպումից հետո, մեր հիշողության մեջ մնացած պատկերի ու կերպարի գաղափարանշանն է վիշապաքարը: Քարեղեն ելակետ, որ հանգույցն է անտեսանելի, անիմանալի, անշոշափելի դրսևորումների միջև: Դիցաբանական մի արարած, որ խորհրդանշում է տիեզերական զորությունների հոսքը և տարերային շարժումը: Փոխաբերական իմաստով, կարելի է ասել, բնության՝ Աստծո աչք, որ տեղորոշված և տեղադրված է էներգետիկ հզոր հոսքերի տեղամասերում:

Աստղագուշակության խորհրդակարգում թանկարժեք քարերը որպես «ամսվա քար» ներկայացնում են 12 կենդանակերպի նշաններով: Այդ համակարգի հիմքն ամենից առաջ հնագույն «Քարերի մասին» գիրքն է: Մոլորակներն ազդեցության ուժով նույնպես խորհրդանշանորեն կապված են թանկարժեք որոշակի քարերին: Հնագույն ժամանակներից քարերն օգտագործվել են բուժական նպատակներով: Կիրառվում էին ոգեհմայական եղանակներ, իսկ որպես դեղամիջոց՝ որոշ քարերի բաղադրությունը: Քարերի բուժիչ հատկություններում առանձնակի տեղ է գրավում գույնը: Բազմաթիվ տարընթերցումներ և թյուրիմացություններ կան քարերի մասին ուսմունքում, բայց ակնհայտ է նրանց ներազդեցությունը հիվանդությունների բուժման, մարդու կենսազգացողության, տրամադրության վրա թե՛ բժշկական, և թե՛ հոգեբանական առումով:

Այսպիսով՝ մարդու երկակի էությունը ի սկզբանե ստիպել է նրան, որ նա ընդունի և շատ դեպքերում հիմնվի խորհրդանիշների և խորհրդակարգերի վրա: Եվ դա որոշակիորեն ունի իր արդարացումը, որովհետև ունի հազարամյակների ապացուցողական փորձ, չնայած այն բանի, որ դա դեռ չի դարձել գիտություն:

Մշակեց
Մնացական ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ

Լրատվական գործունեությունն իրականացնող՝
Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային
մասնաճյուղ:
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ.
հեռ. (094) 53 44 64
Խմբագրական խորհուրդ
Գլխավոր խմբագիր՝
Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլդորադո Պրինտ» ՍՊԸ
Տպագրված է «Ռուբիկ Ղարիբյան» Ա/Ձ տպագրատանը
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 1 տպագրական մամուլ